Universitäts- und Landesbibliothek Bonn

Stephannos Ōrpēleani [Ōrbēlean] ołb ...

Step'annos <Ôrbêlean>

Thiflis, 1885

urn:nbn:de:hbz:5:1-9683

Visual Library

Gottsom 3341

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐՊԷԼԵԱՆԻ

ՈՂԲ

Ի Ս. ԿԱԹՈՂԻԿԷ Ն

Բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով

Հրատարակեց

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

Սուգ առին ճանապարհք
Միոնի. Երեմիա, Ա. 4.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսիսի Վարդանեան.
1885

3341

Доз. Цензур. 24 Февраля 1884 г. Тифлисъ

Тип. М. Вартанянца прот. Тройц. ц. д. № 11

ՑԱՆԿ

1. Հրատարակչի յառաջաբանը.
2. Ողբ ի Ս. Կաթուղիկէն.
3. Օրբէլեանի յիշատակարանը.
4. Ծանօթութիւններ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երեքտասաներորդ դարում Թաթարների բռնակալութեան ժամանակ Երեւելի եղաւ Օրպէլեան տոհմի իշխաններից մէկը Տարսայիճ. «անարկու հասակով մարդ էր նա, ուժեղ, սրտեայ, քաջ պատերազմող, բարեպաշտ աստուածասէր, աշխարհակալներին սիրելի, թշնամիներին անարկու եւ ամէն գործերի մէջ յաջողակ». ծանր հարկերից ազատեց նա բազմաթիւ վանքեր, նորոգեց եւ պայծառացուց շատ եկեղեցիներ, եւ, որ ամենից գլխաւորն է, Թաթարների տարօրինակ բռնութիւններից զերծ պահեց Սիւնեաց յայնատարած երկրի շատ գաւառները։ Նորա այսպիսի ազդեցութեանը մեծապէս նպաստեց եւ սերտ բարեկամութեան կապը Թաթար բռնա-

ռրնեերի հետ. Սլուեեաց այլազգի իշխաանեերից մեկի դստերն Արգուն խաթունին իրեն կնութեան ուզելով՝ նախ քրիստոնեայ մկրտել տուեց նորան եւ ապա ամուսնացաւ նորա հետ: Այս ամուսնութիւնից ծնաւ երեք որդիք. առաջինն՝ Ելիկումը իւր հօր մահից յետոյ 1291 թուին Արղունն խանի հրամանով տիրեց իւր հօր ընդարձակ եւ ճոխ ժառանգութեանը, իսկ երկրորդն՝ Ստեփաննոսը իւր մանկութիւնից նուիրուեցաւ հոգեւոր կոչման եւ նշանաւոր եղաւ ԺԴ. դարի եկեղեցական հայրերի կարգում: Ահա այս Ստեփաննոսն է եւ նեերկայ ողբիս հեղինակը:

Նա կանուխ վարժուեցաւ ուսման մէջ. իւր ամենամերձաւոր խնամատարն եղաւ անգլաւակ հօրեղբայրը Սմբատ, որ իրեն որդի էր գրել Ստեփաննոսին եւ յանձնել էր «առ ոտս աստուածարեալ արանց» սնանելու եւ ուսանելու: Կանուխ արժանացաւ եկեղեցական ստորին աստիճաննեերին. ինքն իսկ ասում է իւր մասին, թէ «կրթեալ ի հրանանգս ընթերցման եւ երաժշտութեան, եղէ վասաղտ եւ անագանոս, կոչեցայ

ի դպրութիւն եւ ի սարկաւագութիւն, քահանայացայ եւ մանկական տիօք կարգեալ կղերիկոս» առի հրաման յաստուածազգեաց եւ յաշխարհալոյս բաբունապետեն Ներսիսի եւ տնաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական»: Քահանայական կարգն ընդունեց նա 1281 թուին. իւր հօր Տարսայիճ իշխանի հրամանով եւ Սիւնեաց աշխարհի եպիսկոպոսների հաւանութեամբ 1286-ին ճանապարհ ընկաւ դէպի Կիլիկիա գնալու եւ Հայոց կաթուղիկոսից, որ այն ժամանակ Հռոմկլայ էր նստում, եպիսկոպոսական աստիճանն ընդունելու: Երբ նա Սիս հասաւ, կաթուղիկոսն արդէն վախճանել էր եւ նորը տակաւին ընտրուած չէր. հարկ եղաւ երեք ամիս սպասել Աղանայում, ուր Կիլիկիոյ բազաւորը Լեւոն Գ. մեծ պատուով ընդունեց նորան եւ հիւրասիրեց մինչեւ նորա վերադարձը:

1287-ին, երբ կաթուղիկոս ընտրուեցաւ Կոստանդին Բ. Պրօնագործը, Զատկի օրը կատարուեցաւ Ստեփաննոսի ձեռնադրութիւնը. կաթուղիկոսն անուանեց նորան Սիւնեաց մետրապօլիտ եւ

«պռօտօՃրօՆտես պատրիարքին Հայոց»: *) 1388 թուին Կիլիկիայից վերադառնալով Տաքեա իր աթոռատեղին, նորապակ մետրապօլիտը, որ բնաւորութեամբ խրոխտ եւ խստապահանջ անձն էր, երկար ժամանակ մաքառեցաւ ըմբոստ Եպիսկոպոսների հետ. նոքա, ինչպէս ինքն Օրպէլեանն է ասում, նախանձելով գնացին այլազգի իշխանների մօտ եւ «բազում ոճիրս սերմանեցին եւ յոյով վիշտս հասուցին եկեղեցւոյ». Թէպէտեա Ստեփաննոս իր հօր ազդեցութեամբ եւ Արղուն խանի հրամանով հաստատուեցաւ իր իշխանութեան մէջ, բայց խաղաղութիւն չգտաւ իր թշնամիների կողմից մինչեւ նոցա իրենց մանը:

Տասնեօրն ամ փառաւորապէս հովուեց Սիւնեաց արքեպիսկոպոսական մեծ վիճակը, որի վերայ ապառեցան «մանկական տիօք» բահանայացած Ստեփաննոսի երիտասարդական բարմ ու զուարթ ոյժերը. այդ ժամանակամիջո-

*) Տե՛ս ծանօթ. 38 և 45.

ցում դուլ ու դադար չունեցաւ նա իւր գործունեութեան մէջ. Տաթեւի եւ Նորավանքի մեծատաւնները զարդարեց նորանոր շէնքերով. իւր սեփականութիւնից յատկացուց նոցա ապահովութեան համար արքայագրերով եւ արձանագրերով վաւերացեալ հաստատուն կալուածներ. կազմեց ու կազմակերպեց վանական ուխտերը. կեանքի ու գործունեութեան կոչեց իւր իշխանութեան ներքոյ գտնուած եկեղեցական դասը. եւ, որ ամենից գլխաւորն է, արեւելեան եպիսկոպոսներին պարագլուխ լինելով, իւր մեծ ազդեցութեամբ պատսպարեց Հայաստանեայց եկեղեցին այն նորամուտ գեղծումներից, որոնց համար բաւական նիւթ էին պատրաստել հռոմէական—յունական արբանեակներն արեւմուտքում: Այս նուիրանձախնդիր ոգին ներշնչեց նա իւր աշակերտների մէջ, որոնցից մէկը՝ իւր իսկ որդեգիրն եւ ազգականը Յովհաննէս Օրպէլեանը՝ ԺԴ. դարում մի նշանաւոր տեղ գրաւեց արեւելեան արքեպիսկոպոսների կարգում: Ստեփանոս կնքեց իւր բազմարդիւն կեանքը 1305 թուին,

ինչպէս պէտք է կարծել, դեռ այրական կորովի հասակի մէջ, դեռ ընդունակ առաւել մեծամեծ գործելու:

Նորա կեանքի ամենափայլուն գծերից մէկը, որ անմահութիւն եւ մեծութիւն պարգեւեց նորա անուանն, եղաւ ուսումնասիրութիւնը. Ստեփաննոս գրեթէ առաջինն եղաւ, որ ժողովեց Սիւնեաց աշխարհի պատմութեան հին եւ նոր աղբիւրները, թօթափեց նոցա վերայից մթութեան եւ անյայտութեան բանձր փոշին եւ կազմեց մի «Պատմութիւն տանն Սիսական», այս գործը, որ նա աւարտեց 1299 թուին, մի մեծ կոթող է նորա գրական հմտութիւնների, լրջմիտ հայացքների եւ նուրբ ճաշակի մասին. իւր դարին յատուկ մի քանի պակասութիւնները չեն նսեմացնում բնաւ այն նշանակութիւնը, որ ունեցաւ Ստեփաննոսի այս ձեռնարկը թէ Հայոց եւ թէ առհասարակ արեւմտեան Ասիայի ազգերի պատմութեան նկատմամբ: Բացի այս մեծ յիշատակարանից՝ Ստեփաննոս թողեց Հայոց դպրութեանը ժառանգութիւն եւ միքանի երկրորդա-

կան արժէք ունեցող գործեր. նոցա մէջ հարկաւ առաջին տեղը գրաւում է «Ողբ ի Ս. Կարուղիկէն», որ գրեց 1300 թուին Կեչառեցի Խաչատուր վարդապետի խնդրանքով:

Ս. Կարուղիկէն Հայոց պատմական Մայր Եկեղեցին է, որի առաւել ծանօթ անունն է Ս. Էջմիածին: Նորա ծագման հրաշալի աւանդութիւնները պատմում է մեզ Ագաթանգեղոս: Ե. դարից մինչեւ ԺԵ. դարը գրեթէ մոռացութեան էր վիճակուել նորա անունը: Ինչ եւ եղած լիներ նա այդ հազարամեայ շրջանում, յայտնի է, որ Հայաստանեայց Եկեղեցու միութեան կեդրոնը չէր: Ուրուրեմն յիշուած են անձինք, որոնք վանեքիցութեան կամ փակակալութեան պաշտօնով ծառայել են Ս. Կարուղիկէին եւ իրենց անուան հետ միասին պահել են նորա յիշատակն եւս. սակայն այսքանից աւելի ոչինչ այլեւս չեն աւանդում մեզ նախնիք: Ուստի կարողացաւ ուրեմն վերանորոգուել այդ հազարամեայ մոռացուած սրբավայրի պատմական նշանակութիւնը եւ վերահաստատութեան

կեդրոն հանդիսանալ ԺԵ. դարում: Անհասանիկ մի խնդիր՝ որի լուսաբանութեանը գուցէ սակաւ ինչ օժանդակութիւն ընծայեն Օրպէլեանի ողբի հետ միասին եւ հետեւեալ համառօտ ցուցումները:

Ս. Կարուդիկեի պատմական նշանակութեան վերաբերեալ գլխաւորապէս նպաստեց, ինչպէս կարծում ենք, կրօնական բանաստեղծութիւնը, որի առաջին աղբիւրն այդ սրբավայրի նկատմամբ եղաւ Ս. Լուսաւորչի տեսիլը: Դեռ Է. դարում, երբ երգիչների ձայնն առելի ազատ էր տխուր մեղեդիներից, Սահակ Գ. Զորափորեցին հակիրճ խօսքով հրաչակեց Ս. Կարուդիկեի ծագումը մի գեղեցիկ երգի մէջ, որը ս. Եկեղեցին ցայսօր շարունակում է եղանակել տօների ժամանակ.

Էջ Միածինն ի Հօրէ.
Եւ յոյս փառաց ընդ նմա.
Զայնք հնչեցին
Սանդարամետք անդնդոց.

Տեսեալ զլոյս մեծ
Հայրապետին Գրիգորի,
Պատմեր ցնծութեամբ
Հաւատացեալ արքային:

Եւ թեպետ Ս. Կաթուղիկէի կանոնաւոր յառաջադիմութեանը մեծապէս խանգարում էին արաբական արշաւանքները եւ կաթուղիկոսների տարագրութիւնը, սակայն ս. եկեղեցիներում անդադար հնչում էր նոյն երգչի ոգեից բացագանչութիւնը.

Եկայք շինեսցո՛ւք
Սուրբ զիւորանն յուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի:

Ժ. դարում, երբ հերձուածներն յառաջանում էին, երբ քրիստոնէական միութեան կապը թուլացնելու ձգտումներն աւելանում էին, եւ երբ ներքին քաղաքական բաժանումները նպաստում էին նաեւ կրօնական պառակտմանը, Անանիա Նարեկացին «վնեմականն ի հաւս» նուիրում է

Ս. Կաթուղիկէի անուանը մի գեղեցիկ ճառ, *) ուր պերճախօս վարդապետը դրուատում է նորա բազմատեսակ բարոյական յատկութիւնները. ոգեւորութեան թեւերի վերայ երեւակայութեան սահմանները բարձրանալով՝ առաջնորդում է նա մեզ դէպի նոյն Ս. Լուսաւորչի տեսիլը. շատ տեղ նորա ձայնը հնչում է բնաբական նեբդաշնակութեամբ եւ իւր վսեմ ոգեւորութեանը օժանդակ են հանդիսանում նոյնչափ վսեմ բառեր.

Դու դարաստան վայելչածաղիկ, բացագանչում է Անանիա, Դու բուրաստան աստուածատունկ. Դու բարձրաւանդակ դիտանոց դիտապետական անարկու. Դու անյուսից յոյս եւ սարտուցելոց հաշտարան. Դու ամենայն յամենայնի:

---

*) Ճառի վերնագիրն է. «Ներբողեան սասցեալ ի Ս. Կաթուղիկէ եկեղեցի, որ է ի Նոր քաղաքի, որ այժմ կոչի Վաղարշապատ քաղաք, յորում տեղւոջ ցուցաւ Հրաշալի տեսիլն մեծի Նահատակի Ս. Գրիգորի Լուսաւորչի»:

Անանիայի այս ճառն անհերքելի ապացուցանում է, թէ Ս. Կարուղիկէի գաղափարն Իբրեւ վարդապետութիւն անծանօթ չէր դեռ Ժ. դարում, սակայն, որքան մեզ յայտնի է, այդ տեսութիւնը սահմանափակուած էր սակաւաթիւ բանասէրների շրջանով: Ընդհակառակը՝ կրօնական բանաստեղծութիւնը, որ սառաւել կենդանի եւ սերտ կապ ունի բազմութեան հետ, մինչեւ ԺԲ. դարը լուռ էր այդ մասին: Առաջինը Ս. Ներսէս Շնորհալին եղաւ, որ առելի ընդարձակ շրջաններում արծարծեց եւ բարձրացուց Ս. Կարուղիկէի անունը. նա իւր Եղիսիոյ Ողբի մէջ մի պատկառելի տեղ շնորհեց նորան, աչքի առաջ ունենալով դարձեալ Ս. Լուսաւորչի տեսիլը: Նա իւր կենդանի հարցումներով եւ բացագանչութիւններով առաջին անգամ գրգռեց եւ ուղղեց իւր ժամանակակից սերունդի սրտերը դէպի այն կեդրոնական սրբավայրը, որի նախկին փառքի մասին դեռ ինքը չնաշխարհիկ էրգիչը կարող էր վկայել.

Անուրջք ու երազք էին յայտնի.
Արդ ծածկեցան ի զարթմընի.

Շնորհալու քնարն առանց արձագանքի չմնաց յաջորդող սերունդի մէջ. մի դար ու կէս յետոյ Ս. Կաթուղիկէի արգահատելի վիճակը ողբաց Ստեփաննոս Օրպէլեանն իւր այս առանձին ողբովը, որ մի նմանութիւն է Շնորհալու Եղեսիոյ Ողբին:

Մեզ անծանօթ է, թէ ինչ շարժառիթներ յարել են Օրպէլեանի զգացմունքներն այս ողբը երգելու: Գիտենք, որ նա մի երկար ուղեւորութիւն ունեցաւ Տաթեւից դէպի Կիլիկիա եւ անտի Տաթեւ, անշուշտ այս ժամանակ նա հանդիպեցաւ եւ վաղարշապատ: Գիտենք, որ նա երեք ամիս Աղանա մնաց. Հայոց հայրապետական աթոռի թափուր լինելը նորա վերայ տխուր ազդեցութիւն գործեց. Կոստանդին Բ. Պրօնագործի ապօրինի գահընկեցութիւնը նորան խիստ զրգռեց եւ յուսահատեցուց: Գիտենք, որ 1293 թուին տեղի ունեցած տխուր դէպքերը, որոնք են Հռոմկլայի անկումը, Ստեփաննոս կաթուղիկոսի գերութիւն Եգիպտոս, հայրապետանոցի կողոպտուիլը, Ս. Լուսաւորչի

աջի եւ այլ սրբութիւնների տաբագրութիւնը ինչպես ինքն ասում է, «աղեցաւ եւ լերդախոց» արին իրեն: Աւելացնենք եւ այն, որ Ստեփանոսն 1291 թուին զրկուեցաւ իւր հօրից՝ Տարասիճ իշխանից. այդ վշտին յաջորդեցին նեռքին ընտանեկան պառակտումներ, թշնամի եպիսկոպոսների մատնութիւններ, Թաթարների ծանր հարուածներ եւ այլն, որոնք եւ միահամուռ զարգացուցին նորա մեջ բողոքի եւ տրտունջի ձայն. «ի նժդեհ եւ ի դառնաղաձան աւուրս՝ ասում է Օրպելեան, կայաք ի մեջ տիեզերաձոծ տագնապի միշտ զգուեալ երեքալեան դիմակցութեամբ. երկնչեաք, եթէ յաւուրս մեր զարթնուլ չարն ի պատերազմ ընդ եկեղեցւոյ եւ յարուցանէ մրրիկ խռովութեան ի մեջ մեր եւ ընթադրեալ կործանէ զսինլքոր մնացուածս ազգիս»: Եւ այն խրոխտ վեհ սիրտը, որ բաբախում էր երիտասարդ արքեպիսկոպոսի սրտի մեջ, «հաշեալ մաշեալ ծփական խորհրդովք» չկարողացաւ այլեւս զսպել իւր վշտերը. իբրեւ առաջնորդ եկեղեցու, այլեւս մոռանալով ամեն ան-

ցաւոր կորուստները, սկսեց ողորմագին հառաչել. Ո՞ւր են այժմ զգեստքն հայրապետական ո՞ւր բազն պատուական, ո՞ւր աջն եւ գաւազանն եւ աթոռն Գրիգորի:

Օրպելեանի սրտի մէջ ամբարուած այս ամենտխուր տպաւորութիւններն անմ, ինչպէս կարծում ենք, նախապատրաստեցին եւ այն ողբի ծրագիրը, որը երգեց նա Ս. Կաթուղիկէի բերանից: Որքան եւ անպաճոյճ է լեզուն, որքան եւ դժգոյն են պատկերները, այնուամենայնիւ ողբի մէջ տեսնում ենք մենք իւր ժամանակի ոգին մի մեծ ազդեցութիւն վայելող արքեպիսկոպոսի, իշխանագուն եկեղեցականի, բազմամիտ հոմուի եւ գիտուն պատմագրի գրչից ելած այդ ողբը այն աստիճանի տարածեց սէր եւ ակնածութիւն դէպի Ս. Կաթուղիկէի նման հնագոյն սրբավայրը, որ ԺԴ. եւ ԺԵ. դարերի երգիչներն այլեւս չեն լռում արծարծելու Ս. Կաթուղիկէի անունը: Նոքա իրենց զանազան ներբողներով եւ տաղերով վկայում են նոր զարգացած գիտակցութեան մասին: Այսպէս օրինակ՝ ԺԵ. դարի

Երգիչներից մէկն Առաքել Բաղիշեցին ոչ միայն պարծենում է Ս. Կաթուղիկէի անցեալով.

Էջմիածին կաթուղիկէ,
Հիմնարկեցար ի Քրիստոսէ,
Աւարտեցար ի Գրիգորէ,
Զարդարեցար ի Տրդատէ.

այլեւ դրուատում է նորա բարոյական եւ հասարակական նշանակութիւնը.

Էջմիածին, պարծանք Հայոց
Քան զամենայն ազգս ստորնոց,

Էջմիածին, ժողովարան
Ազգիս մերոյ Թորգոմական.
Էջմիածին, տեղ նորոգման
Ազգիս մերոյ թշուառական:

Եւ այս նոր զարգացած գիտակցութեան պտուղն է այն պատմական երեւոյթը, որ 1441 թուին, երբ հարկ եղաւ Հայոց հայրապետական աթոռը Սսից Հայաստան փոխադրել, մտքերի մեծամասնութիւնը հակուած էր Ս. Էջմիածնի

կողմը: Թէպէտեւ Հայաստանի մէջ կայ մի ուրիշ կաթուղիկոսութիւն Աղթամարայ վանքում, թէպէտեւ կային Հայաստանում եւ ուրիշ հին, պայծառ ու շէն վանքեր իրենց արքեպիսկոպոսական աթոռներով, ինչպէս են Տաթեւը, Արտազու Ս. Թադէի վանքը, Մշու Ս. Կարապետը եւ այլն, սակայն Եկեղեցական համազգային ժողովը, որ գումարուեցաւ 1441-ին Վաղարշապատում, սահմանեց Սսից փոխադրած հայրապետական աթոռն հաստատել Ս. Էջմիածնում, այսինքն այնտեղ, ուր երբեմն Ս. Կաթուղիկեն՝

Մենացեալ յանվայր դաշտին
Զերդ զգազան անպատին,

իւր ամայի դրութեամբ իրաւունք էր տուել Օրպէլեանին աղաղակելու.

Աւա՜ղ ասեն քեզ, քաղա՛ք հին,
Տո՛ւն եւ աթո՛ռ Երկնաւորին,
Ընդէ՞ր այդպէս եղեր ստորին
Նման խղոց մրգապահին.

Փոխան ձայնից սրբերգենին
Դեռ եւ ոգնիք քեզ կաքաւին,
Փոխան սրբոց պաշտօնեին
Ցուշկապարիկք ի քեզ բնակին:

Բարեբաղդաբար այժմ, երբ Ս. Կաթուղիկեն պետական օրենքների հովանաւորութեան տակ շեն եւ կանգուն կայ իւր զանազան հաստատութիւններով, Օրպէլեանի ողբը լոկ պատմական նշանակութիւն ունի եւ պատկերացնում է մեր աչքի առաջ միմիայն անցած գնացած ժամանակների համատարած ծանր եւ անտանելի թշուառութիւնը:

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

10 *Փետրվ.* 1885 *ամի*

ՏՓԽԻՍ

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՕՐՊԷԼԵԱՆ

ՈՂԲ

Ի ԳԻՄԱՑ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷԻՆ[1].

Ա.

Զայն բարձրգուժ[2] և ահագին
Նման օդոցդ տրոտացին.
Կանչիւն ահեղ և սաստկագին
Գայ ի դաշտէդ Արարատին:
Ընու զաշխարհ բոլորովին
Զորեքծագեան տիեզերին.
Բախէ զականջս ազամածին

Բոլոր ազանցս մարդկային։
Թափէ զխելս ամենայնին
Եւ սրտաբեկ առնէ բնաւին.
Շարժէ ի յողբ անհնարին[3]
Եւ յարտասուս ողորմագին։
Տայ հառաչել հեծեծագին
Կական բառնալ յոյժ ցաւագին.
Կոչէ ի սուգն իւր վշտագին
Երթալ ի գուժ աղաղակին,
Լինել կցորդ ողբոց նորին
Վայ և եղուկ կարդալ նմին։

Բ.

Արդ ընդ ձայնիս այս մահաձին
Պակեան. լսողք հանուրց ազգին.
Զարթեան ի քնոյ մահաբերին,
Փոյթ և շտապ ընթանային.
Խուռնեալ ամբոխք կարաւանին

Խիտ զմիմեանց հետ կոխէին.
Յարամանեան[4] տունն երթային,
Զ Արարատեան դաշտն լցին,
Ի Նոր քաղաք Հայոց հասին,
Այն որ Վարդգէս կոչիւր նախկին,
Զոր և Վաղարշ Արշակունին
Ընդարձակեալ զծիր պարսպին,
Դնէ ի նմա զիւր արքունին,
Փոխէ յանուն իւր զտեղին։

Գ.

Տեսին ի նմա զարքայուհին
Զայն Երկնաւոր Թագաւորին,
Զխորան փառաց Տեառն Յիսուսին,
Զմայրն լուսոյ Հայկայ զարմին
Մերկ խայտառակ ի բաթրոնին[5]
Զանձամբ արկեալ զքուրձ խաւարին,
Հերքն ճողեալ որպէս կնտին,

Ստինքն ցամաք զերդ ըսկնդկին,
Զկուրծքն բախէր քարամբ ուժգին.
Առուք արեանց իջանէին.
Մոխիր կուտէր նման ըլրին,
Ցանէր ձեռամբն ի գագաթին.
Երամք կանանց ճչող ջայլից[6]
Շուրջանակի զնա պարէին.
Դասք երգողաց կանգնեալ կային,
Զդամբանական փողս ածէին.
Աւաղական ողբովք[7] լային,
Զգալարափողսն հնչէին.
Կէսքն շիւան մեծ քարշէին
Կէսքն զվարսիցն փետէին։

Դ.

Ապա հարցուկ նմա լինին
Եկեալքն ի ձայն աղաղակին.

«Այս ուստ, այս ուստ ճիշտ ահագին
Գոչիւնս ահեղ նման ամպին[8].
Այս ով, այս ով ի բազմոցին
Նման մեծի արքայուհւոյն.
Այս ինչ, այս ինչ սուգ անհնարին,
Որ ոչ եղեալ[9] և ոչ լինին»։

Ե.

Պատասխանէ մեծ թագուհին,
Բանայ զբերանն ցաւագին.
Հոգոց[10] հանէ խորոչ[11] սրտին
Զծուխն ցնդէ թանձր ուլնգին.

«Այս ես, այս ես, Էջք Միածնին
Իմ կուսածին թագաւորին,
Որ հարսնացեալս էի նմին
Ի յաշխարհիս թորգոմածին։
Երբեմն էի որպէս զերկին,

Հիմ[12] հաւասար եմ գռեհին.
Երբեմն արփի արևածին,[13]
Այժմ խաւար անհնարին.
Երբեմն թագ կապեալ ձեռին
Անեղ բազկացն իմ Ցիսուսին,
Այժմ անպիտան նման աղբին
Եղեալ կոխան չորքոտանեաց.
Երբեմն հարսն առագաստին
Մածեալ գրկօքն իմ փեսային,
Այժմ եմ սեղեխ օտարոտին
Անպէտ նման հոսեալ ջրին։
Իսկ այս, որ շուրջ զինև պարեն,
Են իմ դստերքն, որ նախ ելին,
Զորս աստ և անդ հարսնացուցին
Եկեղեցիք Հայաստանին։
Ժողովեցաք ի միասին
Լնուլ ողբովք զաշխարհ ընաւին։

Զ.

Արդ դուք ականջ դիք իմ բանին,
Լուարուք զաղէտս[14] իմ վշտագին,
Կոչեմ և աստ զօրքն[15] վերին,
Զայն արձակեմ ի վեր յերկին.
Զի գան ի վայրս իմ յիստորին,
Խառնին ընդ ազգքդ երկրաճին,
Լսեն զգանգատս իմ դառնագին,
Զար աղէտիցս իմ կցորդին,
Ողբան և լան ըստ արժանւոյն
Ամբաւ վայիւք ինձ ախտակցին։
Զի թէ միոյ վասն ոչխարին
Սուգ է նոցա անհնարին,
Ապա քանի՞ անթիւք էին,
Որք առ ինև կորեան ընաւին։

Է.

Լուր ինձ, երկին և դասք վերին,
Մի՛ դիր, երկիր, և որ ի սմին,
Ես թագաւոր էի նախկին
Բարձր և հզօր անպարտելին,
Կանգնեալ յաշխարհս Ասքանազին,
Տիրեալ ազգաց ու ազանց սրին
Ի դրանց Հոնաց և Կովկասին,
Ուր ծով Կասպիցն[16] է և Խազրին,
Մինչ ի ստորին կողմն Գամբրին
Եւ Կոկիսոն հատ սահմանին,[17]
Ի Պոնտոսէ հիւսիսային
Մինչ ի Վրկանն պարսկային։

Ը.

Արեգակունք առ իս կային
Պայծառ ւ ահեղ քան զզգալին,[18]

Շնորհն անմահ քահանային,
Պատիւն մեծ թագաւորին.
Փեսայն հեմէր յառագաստին,
Հանգչէր ընդ իս միշտ յանկողին.
Ծնայ որդիս գեղեցկածին,
Նաև դստերս լուսածին.
Զօրք իմ անթիւ առ իս կային,
Որպէս օրէնն է արքային.
Զայնք պաշտամանց յիս հնչէին
Նման վերնոց լուսեղենին.
Տօնք տարեկանք յիս խմբէին
Անհամեմատ յազգ մարդկային.
Գետք իմաստից յիս բղխէին
Նման Դիկլաթայ և Եփրատին.
Պայծառազարդ խրախանայի
Ես իմ մանկամբքն դեռածին։

Թ.

Յանկարծակի դիպայ չարին,
Որ չէ եղեալ յազգ մարդկային.
Իմ թագաւորն այն երկնային
Ցիս Հայեցաւ խայթիւ խորին.
Գլխոյս երետ[19] իմ կնտուրթիւն.
Զթագն ի յերկիր ընկէց ստորին.
Արեգակունքն, որ յիս կային,
Խաւարեցան ամենևին.
Փեսայս այրի թողեալ բնաւին
Հալածեցաւ յաշխարհ ստորին.
Որդեակն իմ սէգ Արշակունին,
Որ անդրանիկն էր և նախածին,
Զթոշակն էառ մահու յետին,
Վախճանեցաւ ի գիրկ ծնողին.
ԶԱրտաշիսէ ասեմ վերջին,
Որ աճ խաւար Հայոց ազգին։

Բայց միւս ևս այլ կայր նորածին,
Զոր զգուշութեամբ սնուցանէին[20].
Մխիթարէի ես զիս ինքնին.
Մեծ պարծէի յուսով նորին,
Որ ի տանէն էր Յուդային
Գրգուեալ անուամբ Բագրատունին։
Աւաղ յիշմանս այս երկրորդին,
Որ զիս խոցեաց անհնարին
Անբուժելի վիրօք վերջին,
Որ սպեղանեօք[21] ոչ բժշկին։
Որք զարգացեալք յարբունս հասին,
Յարքունական յաթոռ նստին.
Զթագ արքայիցն այն առաջին
Որպէս պսակ ի գլուխ եդին.
Եւ զիս սակաւ կազդուրեցին,
Թէպէտ առ իս ոչ օթեցին.

Քանզի աթոռ Նոքա արկին
Ի Շիրակայ տանն ի յԱնին,
ՅԵրազգաւոր[22] մեծ աւանին,
Նաև ի Կարսն Վանանդին,
Տիրեալ Վրաց և Աղուանին,
Հայոց բոլոր մինչ յԱսորին։
Որոց Աշոտն էր առաջին,
Ապա Սմբատ[23] որդի նորին,
Որ վկայեաց ի մեծն Դևին[24]
Կախեալ զփայտէ նման Փրկչին.
Յետ որոց այլքն ի նոյն կարգին
Որդիքն ընդ հարցն յաջորդեցին
Մինչ ի Գագիկ ընաւից վերջին,
Որ գնաց անդարձ յաշխարհ Յունին.
Զոր և անդէն իսկ կորուսին
Զարաբարոյ ազգ Հոռոմին[25]։

ԺԱ.

Ահա կորեայ բոլորովին
Մտեալ ի սուգ դառն և ուժգին։
Ո՞ւր է որդին իմ նախաձին
Արշակունի տունն առաջին,
Կամ ո՞ւր կրսերն զկնի նորին
Բագրատունի տունն վերջին։
Ո՞ւր են փեսայքն և փառք նոցին,
Պատրիարքունք Հայոց ազգին,
Որք մինչ Յովսէփ Հողոցմեցին[26]
Յիմ սենեկիս հանգչել կային.
Ապա ի Դվին չուեալ գնացին
Բանիւ սրբոյ զօրապետին
Վարդանայ Մամիկոնին[27]
Սպարապետին Հայոց սպային.
ԶԳիւտ ընտրեցին զերանելին
Ի Սուրբ Գրիգորն նատուցին.

Մինչ Յովհաննէս այն Գառնեցին
Կացին անդէն ի նոյն տեղին.
Բայց անտից աստ[28] զիս խնամէին,
Որպէս օրէնն էր ծնողին։

ԺԲ.

Իսկ ի զօրանալ Իսմայէլին
Սրոյ ձեռին հագարացին
Եղեալ երկփեղկ տուն Արամին
Ձեռամբ Յուսփայ անիծելոյն,
Ձեղքեալ յերկուս թագաւորին
Բագրատունեացն և Արծրունին,
Գագիկ որդին այն Դերենկին
Կապեալ իւր թագ դէմ Սմբատին[29].
Որ և կորուստ եղև քնաւին
Հայոց ցեղիս բոլորովին։
Աթոռք բազումք անկանէին.
Տունք և ապարանք կործանէին.

Իշխանք անհետ կորնչէին.
Ազգօք իւրեանց ջնջեալ հեղձին.
Ազատորեաքն ի բաց խլին.
Նման ծխոյ սպառէին.
Եկեղեցիք քանդեալ լինին.
Եւ յաւարի հարեալք գերին.
Գեղք և աւանք աւերէին.
Քաղաքք և բերդք տապալին[30]։

ԺԳ.

Բայց միւս ևս այլ մէկ ջահ լուցին
Ի տան Բաղաց Սիսականին
Սմբատ սեպուհ քաջազարմին.[31]
Ի հայկազանցն այն առաջին
Աջոյ բազուկք Հայոց ազգին
Բարձր և հզօր անպարտելին
Թագաւորեալք թագ կապեցին
Ուժգին և խրոխտք ընդդէմ չարին։

Աւուրքք բազմօք ի յետ անցին[32]
Ընդ թագաւորս Բագրատունեոյն.
Հարիւր և քսան ամք յաւելին
Վասն ամրութեան այնմ աշխարհին.
Որոց վերջին Սենէքարիմ[33]
Նաև Գրիգոր որդի նորին։
Ապա և զայս ի բաց բարձին
Ի ժամանակս Ելակուզին
Ազգն անիծեալ և պարսկային,
Որք հրով զաշխարհս տոչորեցին
Ի վեց հարիւր մեր թուականին
Եւ տասնևհինգ յաւելուածին[34]։

ԺԴ.

Ահա սոքա այսպէս անցին.
Բնաւին ի բաց եղծեալ գնացին.
Որպէս զստուերք այլ չերևին.
Նման երազոյ կարծեօք թուին։

Որպէս ծաղիկք ամարայնոյն
Արևակէզ թարշամեցին.
Որպէս սաղարթք վարսեալ ծառին
Խորշակահար ցամաքեցին։
Որպէս զանտառ Լիբանանին
Զսարդն և զսօսն և զնոճսարին
Տապարահատ կործանեցին
Սուրք[35] անխնայ Իսմայելին։
Արդ ոչ ևս է, ոչ երևին.
Անէացեալք նման նանրին.
Միայն այրի զիս աստ թողին.
Որպէս զոչինչ ի բաց լքին։
Արդ մենացեալ յանվայր դաշտին
Զերդ զգազան անապատին[36]
Զաչուերս ածեմ կողկողագին,
Զայն արձակեմ ողորմագին։

Ժե.

Ո՞ւր էք, որդիք իմ սրբածին,
Եկայք առ մայրս ձեր նախկին,
Որպէս օրէնն է զաւակին,
Տանել խնամ ծեր ծնօղին։
Ամենևին ինձ չերևին
Բայց թէ ոգնիք ընդ ճագարին
Կամ Սկիւթացի հօրանք թուրքին
Կամ խայտառակ մանկունք նոցին,
Որք միշտ կոխան զիս առնէին
Տեղիք չարեացն, որք գործէին։
Ահա վայ ինձ բիւրք ընդ բիւրին.
Անհուն եղուկքն ի յիս կուտին.
Տեսէք զիմ փառքն զառաջին.
Տեսէք զվերջին նախատս անձին,
Թէ ո՞ւր էի, ՝ւ յո՞ւր ընկեցին,
Յերկնից յերկիր զիս իջուցին։
Որք անգնդոց զիս ծածկեցին,

Որ այլ չունիմ յոյս փրկողին[37]։
Ո՞ւր են փեսայքն իմ առաջին
Հայրապետաց ջոկքն, որ անցին.
Ո՞ւր թագաւորքն իմ են նախկին,
Ո՞ւր և ազատքն ընդ սեպուհին.
Ո՞ւր են իշխանք գահագլխին,
Նախարարաց կոյտքն, որ կային.
Ո՞ւր զօրութիւնք բիւր բանակին,
Խուռնեալ ամբոխքն անթուելին։
Ո՞ւր բաբունիքն, որ յիս կային,
Դասք երիցանց կղերիկոսին.
Ո՞ւր սարկաւագքն յիմ բադրոնին,
Ո՞ւր են դպիրքն ի տաճարին,
Ո՞ւր ընթերցողք անագանին[38]
Ո՞ւր են փսաղտաքն, որք երգէին։
Ո՞ւր իմ հանդերձ Լակոնացին,
Շղարշատեռն և ծիրանին.
Ո՞ւր են կերպասքն ընդ բեհեզին,

Եւ կապուտակքն հնդկային։
Ո՞ւր են ճամուկքն ընդ կամարին
Փողեալ ոսկւով ընդ մարգարտին.
Ո՞ւր ծամակալքն ընդ սոփերին,
Ո՞ւր վարսակալքն կեփազին,
Որք ի համակ ոսկի լինին
Յեռեալ ակամբք մեծագնին։
Կայծ կարկեհան ընդ շափիւղին
Կարմիր յակունդ սարդիոնին[39]
Ո՞ւր պահանջանքն իմոյ բազկին,
Եւ ապարանջանքն իմոյս ոտին[40]։
Ո՞ւր ձայն երգոց պաշտօնէին,
Ո՞ւր և բուրմունքն անուշ հոտին,
Ո՞ւր կանթեղունք լուցեալ ջահին
Նման աստեղացն, որ ի յերկին.
Ո՞ւր են զենմունք մեծ խորհրդին,
Որ միշտ առ իս կատարէին.
Ո՞ւր հաշտութիւնք աստ Արարչին,

Որով փրկեալք աշխարհ լինին։
Արդ զո՞ր կարեմ ըստ պատշաճին
Թուել զիմ փառսն, որ նախ էին.
Նման հողմոյ յիս շնչեցին
Ու անհետ ի բաց անցեալ գնացին։

ԺԶ.

Բայց ո՞վ տեսողք իմոյս պատուին,
Լսո՛ղք բանիցս իմ ցաւագին,
Դուք ողբացէք զիս վշտագին
Զցայգ և զցերեկ անհնարին։
Վա՛յ տո՛ւք գլխոյս բոլորովին,
Եղո՛ւկ անձինս ամենևին.
Զայս ո՞վ տեսեալ կամ ո՞ւմ լինին,
Որ պատահեաց թշուառս անձին։
Աւաղեցէ՛ք զիս սաստկագին,
Աշխարեցէ՛ք ողորմագին,
Ա՛ծէք առ իս զտեսողն հին

Զերեմիասն Եղկէսացին[1]
Հանդերձ պարու մարդարէից
Իսրայէլեան հնոյ ցեղին,
Որ են հմուտ լալոյ բանին,
Զի բնաւ ի սգոյ չդադարեցին։
Եթէ ողբան ըստ պատշաճին
Զահեղ կորուստն իմոյ զարմին,
Ծով զգլուխն առնեն բնաւին,
Զաչուերսն աղբիւր դառն արտասուին,
Սգան ողբովք անհնարին
Զիմ ճանապարհքս, որք անցանին։
Աւա՜ղ ասեն քեզ, քաղա՜ք հին,
Տո՛ւն և աթո՛ռ Երկնաւորին,
Ընդէր այդպէս եղեր ստորին
Նման խղոց մրգապահին,
Պարտէզ ու այգի՛ քակեալ ցանկին
'Ի ապականեալ խոզից շամբին։
Փոխան զօրացն հրեղինին

Հրեշտակք չարին ի քեզ պարին,
Փոխան ձայնից սրբերգենին
Դևք և ոգնիք քեզ կաքաւին.
Փոխան բուրմանցն նարդոսի
Աղբք և աւիշք ի քեզ կուտին.[12]
Փոխան սրբոց պաշտօնէին
Ցուշկապարիկք ի քեզ բնակին.
Փոխան զենմանց պարարակին
Հօրանք այծից ի քեզ բունին.
Ա՜յ վա՛յ քեզ վա՛յ, որ չվճարին,
Վա՛յ զքո փեսայքն առաջին,
Որ բնաւ ի քեզ այլ չերևին.
Վա՛յ զքո երեցն Արշակունին.
Վա՛յ զքո կրսեր Բագրատունին.
Վա՛յ զքո Սիւնին և զԱրծրունին.
Վա՛յ զՄամիկոնին և զԱղուանին.
Վա՛յ զՇիրական և զՎանանդին.
Վա՛յ զՏարօնոյն և զԾոփացին։

Վայիւք քանի՞ քեզ հանդիպին.[43]
Մինչ եզը և հատ չկայ քո չարին.
Վայ ի վերայ վայից կուտեն,
Թո՛ղ քեզ անբաւ յաւիտենին։

ԺԷ.

Արդ, ո՛վ դատերք իմ նախաձին,
Զորս և առ իս ժողովեցին
Սգալ ողբովք անհնարին
Զխայտառականքս, որ մեզ հասին.
Ոստան քաղաք Հայոց Դվին,
Անի ամո՛ւրդ Շարային,
Սիւնի՛ք ու Աղուանք ընդ Վիրային,
Հինգ Ամարաս Գրիգորիսին,
Շիրիմ սրբոյ առաքելոյն
Թադէոսի, որ յԱրտազին,
Հաղբա՛տ, Բջնի՛ն և Ամատունի՛ն,
Որ յԱրագած ես յԱնբերդին,

Բագուան և Կարս ընդ Բասենոյն,
Կարին քաղաք Բարձր Հային,
Վասպուրական տունդ Վանին,
Տարօն, Սասունք և Ծոփային,
Եւ այլ աշխարհ հայասեռին
Միջագետաց և Հոռոմին,
Կիւլիկիայ կողմ ստորին
Պատուեալ գլխովքդ մեր նախկին.
Թողումք զողբանքս ցաւագին,
Առնեմք աւարտ լալեաց բանին.
Ցուսահատիլ չէ պարտ քնաւին
Մեզ ի յուսոյ Անմահ Բանին,
Որ ի քարանցն անշնչային
Կանգնէ որդիս Աբրահամին.
Այլ պաղատել մեզ խիստ ուժգին
Դիրկս արկանել ոտից նորին,
Զցայգ և զցերեկ կանխել ի սմին,
Զարթնուլ ի քնոյ զբաղականին.

Միթէ կարճէ զչափ չարին,
Որ մինչ ցայսօր ընդ մեզ անցին.
Առնէ վախճան սգոյս խորին,
Զոր բազմամեայ կրեմք յանձին.
Նա նորոգումն մեզ կրկին,
Որ բնաւ չյիշեմք զփառսն առաջին.
Կանգնէ զաթոռ թագաւորին
Եւ զգաւազան պատրիարքին,
Ամենեցունց ըստ իւր կարգին,
Ուղղէ զգահոյս տիրականին.
Նոր զարդարէ փառօքն հին
Եւս առաւել քան զոր էին.
Տայ մեզ գոչել ձայնիւ ուժգին.
«Վերջինս է մեծ քան զառաջին»։

Եւ մեք ամէնս ի միասին
Տամք գոհութիւն մեր փրկողին
Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն
Փառք և պատիւ Անեղ Բանին
Յաւէտ ամօք, որ չվճարին,
Այժմ և յանկէտ յաւիտենին։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿ ԲԱՆԻ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ՈԳՈՂԻՆ.

*

Սիւնդ լուսոյ ի սկզբանէ,
Խորան փառաց կանգնեալ յերկրէ,
Տուն Աստուծոյ Կաթուղիկէ,
Լուսապսակ հարսն ի յերկրէ,
Ահա քեզ ողբ, դու հառաջէ,
Ըստ արժանւոյն, որպէս պարտ է
Քոյին ծննդովքս, որ նուաղել է,
Եկեղեցեօքս, որ հնացեալ է։

*

Ցողեալ տաղիւ չափ յանկական
Ըստ արհեստին հոմերական

Ստեփաննոսի թշուառական
Ոգւով մեռեալ և անպիտան
Համակ կենօք որպէս զանբան
Հերձեալ ի փուշս յաշխարհական
Շնորհաց լքեալ յարփիական
Գործով լցեալ եղերական։

*

Երկնաքատակ տանն Սիւնի,
Որ անմարմնոցն է սխրալի
Բոլոր քնաւիցս քաղձալի
Որպէս զդրախտն Ադինայի,
Կացեալ պարէտ[44] բարձր ի դիտի
Գահագլուխ յայսմ աշխարհի
Նստեալ յաթոռ մետրապօլտի
Պռոտոֆրոնտէս Հայոց կոչի[45]։

*

Փուլթով մեծաւ զմեզ Հարկեալ,
Ի յայս Հանդէս բանից մղեալ,

Բաբունապետս հոգւով լցեալ
Անյաղթ հաւատս[16] շնորհօք ծաղկեալ
Եւ բանիբուն մեզ ճանաչեալ
Յազգաց քաղմաց գովութանեալ,
Որ Խաչատուրս է յորջորջեալ
ՅԱրարատեան տանէն եկեալ։

*

Արդ պատուեմ, ով սուրբ խորան,
Եկեղեցեօքդ Հայաստան
Ընկալ զիս քանքս ողբերգական
Որպէս խայտիք նուիրական,
Զոր հիւսեցի դիմառական
Ի դէմս քոյ խորհրդական։
Թէպէտ ես գարշ եմ թանման,
Բանքդ ի շնորհաց Հոգւոյն ծնան։

*

Նման այրուոյն խերուէշին
Լումայք քանիս քեզ ընծային

Կամ չքաւորաց առ խորանին,
Որք մազ միայն նմա մատուցին.
Մի անարգեալ ըստ տեսողին
Խոզ համարել պատարագին,
Այլ զիմ ընկալ որպէս նոցին
Յընդունարան քում խորհրդին։

*

Ողբովք առ Տէրն պաղատէ,
Վասն աշխարհիս այս մեր հայցէ,
Նաւաղեալ ազգիս, որ սպառեալ է,
Նորոգութիւն փութով խնդրէ,
Խաղաղութիւն խաղին շնորհէ
Անշարժ յաւէտ, որ չսասանէ,
Ընդ որ և հիքոյս, որ գերեալ է,
Մաղթեա՛ չթողուլ ի ձեռանէ։

*

Սահման սիրոյն արարչական
Խոր և անհուն անդնդանման

Տացէ փրկանս ազգիս մարդկան,
Որ և ազինս այս Հայկական,
Նաև եղբօր մեր սրբազան
Խնդրող բանիս ներշափական,
Ընդ որս և ինձ բաշխէ փշրան
Ի սեղանոյ իւր որպէս շան։

Եւ նմա փառք միշտ յաւիտեան
Այժմ և յաւէտ և անվախճան։

*

Զառէր Ստեփաննոս արարող բանիս
Ցիշեցէք ի Տէր Յիսուս, ամէն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Այս ողբի բուն վերնագիրն է. „Բան բարառնական ոգեալ դիմառնարար ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին. Ողբ աւաղականք և ձայն աշխարհականք լեալ անհուն հե-

ծեծանոք վասն աւերման աշխարհիս Հայոց և բնաւին սպառելոյ հայրապետութեան և թագաւորութեան համագունդ իշխանութեան, շարեալ չափաբան բերմամբ հոմերական արհեստիւ ի Ստեփաննոսէ Սիւնեաց այցելուէ ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի»։

Այս ողբը առաջին անգամ լոյս տեսաւ 1790 թուին Նոր Նախիջևանի Ս. Խաչ. վանքի տըպարանում Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեանի հրամանով և ծախքով։ Երկրորդ տըպագրութիւնը լոյս տեսաւ Կալկաթայում 1846 թուին։ Ներկայումս ոչ միայն սպառել են երկու տպագրութիւնները, այլ մինչև անգամ շատ սակաւաթիւ անձինքների յայտնի է նոյն իսկ այս ողբի գոյութիւնը։ Այս տպագրութեանը ձեռնարկեցինք, օգուտ քաղելով երկու գրչեայ օրինակներից, որոնցից մէկը (ա. ձեռագիր) թուական չունի, իսկ միւսը (բ. ձեռագիր) գրըուած է 1626 թուին։ Երկուսի համեմատութեան ժամանակ աչքի առաջ ունեցանք և Նոր

Նախիջևանի տպագրութիւնը, իսկ Կալկաթայինը մեզ կարելի չեղաւ տեսանել։ Առաջիկայ ծանօթութիւնների մէջ ջանացել ենք կարելւոյն չափ ցոյց տալ կարևոր տարբերութիւնները։ Բնագիրը կազմեցինք ա. ձեռագրից, որը մեզ համեմատաբար աւելի հին և ուղիղ էր երևում։ Բովանդակութեանը որոշ ձև տալու համար ամբողջ բնագիրը բաժանեցինք ԺԷ. յօդուածների, որոնք ոչ գրչեայ և ոչ տպած օրինակներում չկային։

2. Ն. Նխ. տպ. Քարէրաբոժ։ 3. բ. ձեռ. անհայտին։ 4. Երկու ձեռագրի և Ն. Նխ. տպ. մէջ այսպէս է. Թերև լինելու է յարմանէան։

5. Ձեռ. Քանհան. ուղղեցինք՝ Քանրան, որ Յունարէն է և նշանակում է՝ Քաղմոց, նոտարոն, ա-ռնոտ. Հայերէն գրւում է և Քարդրոն, Քարդրոնի. վստահացանք ուղղելու, որովհետև Օրպէլեանը մի ուրիշ տեղ գործ է դնում թէ ուղիղ ձևը և թէ նորա Հայերէն թարգմանութիւնը (տես ԺԵ. էմ Քարդրոնին և Դ. է Քանրոն.) Ն. Նխ. տպ. է Քաց հանին։

6. Ն. Նխ. տպ. հ-ոգ լային. 7. ձեռ. ողբաւ.
8. ա. ձեռ. ամբին. 9. ա. ձեռ. ոչ էղեն. 10. ա.
ձեռ. և Ն. Նխ. տպ. յոգ-ոց. 11. Ն. Նխ. տպ.
խորոց. խոր, խորոջ հոլովուած է ինչպէս դեղի,
աեղ-ոջ, կին, կնոջ, կամ աշխարհաբառ՝ դէր, դի-
ր-ոջ. ընկեր, ընկերոջ և այլն։

12. Ն. Նխ. տպ. այժմ. հիմ=հիմայ=հիմակ
գործածելի են միայն աշխարհաբառի մէջ և
նշանակումեն՝ արդ, այժմ։

13. բ. ձեռ. և Ն. Նխ. տպ. արՔ արքիածին.
14. բ. ձեռ. ղաղէր. 15. Ն. Նխ. տպ. ղաղր։
16. Ն. Նխ. տպ. Կազբիցն. „ծով Կասբից և Խազ-
բին» միևնոյն Կասպից ծովն է։

17. Հոգ—հատանել բայից է, որ նշանակում
է կտրել. սահման հատանել—սահմանը որոշել.
«հոգ սահմանին»=սահմանագլուխ.

18. ձեռ. ղոգալին.

19. Եղեգ՝ միջին Դարերի աշխարհաբառ է.
նշանակումէ գոՔ-ից. ներկայումս այդ ձևը կայ
Թիֆլիսի Հայոց բարբառի մէջ էղեգ։ տես և
Էղել=եկաւ։ Ն. Նխ. տպ. Եգ։

20. Անուանումն նշանակում է՝ այն, որին ես անուանում էի. ինչպէս այստեղ, նմանապէս և այլ տեղերում՝ վերևն և ներքևը՝ Օրպէլեանը գործ է դնում յոգն. գ. դէմքի նման բայեր. բայց նոքա եզ. ա. դէմք են. ն. գիրը դիմորոշ յօդ է և գործ է դրած ա. դէմքի հետ միմիայն յանգի նոյնութիւն պահպանելու համար։

21. ա. ձեռ. «Էպանաս», բ. ձեռ. «պէպանաս». ն. նխ, տպ. «պէպանէօ» 22. ա. ձեռ. Էրաշէաս. 23. ա. ձեռ. Սմպատ. 24. ա. ձեռ. Ի մեծն Ռվին. 25. ա. ձեռ. Հովմին. 26. բ. ձեռ. Հայոց մեծին. ն. նխ. տպ. Հոպոսեցին. 27. ա. ձեռ. Մամիկոնոյին. 28. ն. նխ. տպ. անդի սոպ. 29. ձեռ. չկայ դէմ. ն. նխ. տպ. դէմ։

30. Մեր երկու գրչեայ օրինակներում այստեղից սկսած հետեւում են խառն և մթին տողեր, որոնք խանգարում են ամբողջի ներդաշնակութեանը. բացի այս՝ ն. նխ. տպագրութեան մի քանի տողերը չկան մեր գրչեայ օրինակներում։ Այս պատճառով ներելի համա-

րեցինք յիշեալ տողերը ծանօթութիւնների մէջ պետեղել։ Նօտր գրով տպած տողերը գըրչեայ օրինակներում չկան։ այլ հանել ենք նախ. տպագրութիւնից։

Սակաւ աւուրքք ի քաց ջնջին
Անյայտ, որ նիշ բնաւ չերևին,
Բոլոր գաւառք Հայաստանին,
Որպէս խանձողք զերծեալք ի հրոյն.
Հանց որ՝՝ անցորդք ճանապարհին
Տեսեալ զգլուխսն շարժէին,
Զարմանք զմիտս ըմբռնէին,
Շչեալ՝ ի քաց անցեալ գնային։
Իսկ սինլքորք Բագրատունին
Թէպէտ սակաւ ամօք կացին,

Ծանօթութիւն

՝՝. Հանց որ՝՝ — միջին դարերում մտած է գրաբանութեան մէջ և նշանակում է հենց որ։

Այլ չախչախեալ եղէգն էին,
Բեկեալ կենօք տատանէին։

*

Ընդ որ հայրապետքն շրջէին
Ալէկոծեալք այսր անդր յածին.
Մինչ ի Վահրամ Պահլաւունին,
Զոր Գրիգորիս յորջորջէին,
Որդի մեծի մագիստրոսին
Գրիգոր մարզպան և կիտոնդին
Պռօտոնսպաթար և կրռընդին
Հայոց մեծաց սեւաստոսին։ բ

բ. Այստեղ յիշուած են Գրիգոր Մագիստրոսի տիտղոսներն և պաշտօնները, որոնց մի քանիսի նշանակութիւնը պարզ չէ. զոր օրինակ՝ կիտոնդ (կիտոնդին), կրռընդ (կրռընդին), պռօտոն—սպաթար և սեւաստոս։ Վերջին երկու խօսքերից՝ առաջինը նշանակում է առաջին ընկերապան, իսկ երկրորդը՝ յարգելի, պատուելի։

Սա ցանկացեալ գրոց իմաստին
Դնէ տեղապահ զԳորգ Ծերունին Գ.
Զուէ յաշխարհն վատաճին,
Մտեալ ի քաղաքն Ատամպօլին,
Թարգմանութեամբ յամեալ ի նմին,
Դառնայր այսրէն յիւր հայրենին,
Լուեալ զառումն իւր քաղաքին
Ի ձեռն պիղծ Ալփասլանին
Զտուն նախագահ Բագրատունեաց
Զանի քաղաքն Երիայինդ։
Գնայ ի տուն մեծ իշխանին,
Որ Գոգ Վասիլն կոչէին.

Գ. Գ-ոգ Ծերունին — Գրիգոր Բ. Վկայասէրի տեղապահ Լօռեցի Գէորգ վարդապետն է, որին նա յետոյ մերժեց հայրապետական աթոռից.

Դ. Երիայինդ — Հարայի կամ Երիակայ անուան տեղն է գործ գրած.

Բնակէ ի հեծ հեռաստանին,
Որ Կարմիր վանք յարգելիին.
Կաղէ սա ինքն ղէր սաղցային
Զոքէր Բարեղ ճոխ և արին
Որդի հեծի Մաքիսարանին,
Զոր իւր կամաւ ձեռնադրեցին
Յարհիսական տան Հաղբատին[է]:
Գնացին այլ աղ գարեյան քնաւին.
Քանզի անդէն զվանծան սահին:
Իսկ ընդ սարդ, արք սաստ կային,
Գաղթի արդին այն Աղասին
Եւ հիւս Գաղթին Կարէցին
Որոյ զսարէր նոքա անցին.
Խաբիանօք այն ղէրդ սղին
Առ ընդ սարդն Յառնաց գնացին.

է. «Յարհիսական տան Հաղբատին»—նշանակում է Հաղբատու վանքի արքեպիսկոպոսական վիճակը։

Զմինն ի կղզի ծգեալ կարգաւոր,
Մի-ոյն էգուառն զքեզզ Մանդալին,
Զոր և յեղուց խելգեալ գպառնին
Զեռմբ այն շուն ալիզծ պապայինզ.
Բայց մի-ոյ Գաղիկ Վանանդեցին
Վախճանեցաւ ի նմին ամին.
Թողեալ ծառայն զի-ոյ Ընտին
Զամենեքսին փաղ և արին.
Ոչ և պատեալ զի-ոյ հայրենին
Ի Գիւանքեանն արքայ Յառնին,
Ան-նա- վասնն հարքի-ոյ պատանին
Ե- զամենայն փաղաք ընդ նմին.
Անդէն և անդ նոքա մնային,
Ան- ժամանակ մի փայլեցին,

զ. Ն. Նիս. տպ. «Զեռմբ արքայ Մանդալին». «ալիզծ պապային»—ակնարկ է Կեսարիայի եպիսկոպոսի Մարկոսի մասին, որը Գնագիկ Բ.ի թշնամին էր։

Յ՝ոգոյ՝ էջապ՝ ՝ելՀ՝ն ՀՆաա՝ին
ԶաՀՀնաա՝ոյՀ՝ալոց ՀՀ ՀՆաայ ՀանՀՀՀ՝ին։

31. Ն. Նիս. տպ. ՀՆ՝ն ՀՀՀ՝ ՀՆՀՀ՝ին. 32. ա. ձեռ. ՀՆՆՆ՝ՀՀ՝ ՀՆաՀՆ՝ՀՀ՝. 33. բ. ձեռ. ՍՀՆՆ՝ՀՀ՝ին.

34. Փրկչական 1166 թուին. իսկ սկիզբն եղաւ 970 թ.

35. ա. ձեռ. ՀՆՆՆ՝ՀՀ՝. 36. ա. ձեռ. „Տի՝ՀՀ՝ ՀՀ՝ՀՀ՝ ՀՀ՝ՀՆ՝ՀՆ՝ին». 37. բ. ձեռ. Փրկչին.

38. Եկեղեցական նուիրապետութիւնն ինն դասունի. առաջինը պատրիարքն է, իսկ վերջինը փսաղտը։ Այս դասերի անուններն է, որ Օրպէլեան սիրում է գործ դնել ինչպէս իւր ներկայ ողբի նմանապէս և իւր պատմութեան մէջ։ Այդ անունները ցոյց են տալիս, որ հին ժամանակ Հայերն Յոյներից են փոխ առել իրենց նուիրապետական կազմութիւնը. ժամանակի ընթացքում անուններից շատերն հայացել են, ոմանք ճնացել են կրկնակի ձևով, իսկ մի քանիսը նոյնութեամբ։ Ներսէս Լամբրոնացին և Ստեփաննոս Օրպէլեանը (տե՛ս Նէրսէս Լամբրո-

նայլ «Խորհրդածութիւն ի կարգս Եկեղեցոյ» Վենետիկ, եր. 81. Սրբոյն Օրպէլեան, «Պատմութիւն դանն Սիսական» գլ. ԻԶ.) բաւական ընդարձակ նկարագրում են այդ դասերը. սոցա համառօտ պատկերն այս է.

Թ. Փաղաղ կամ փալաղ=նաստիրդոս, երգիչ, որ ամենավերջին կարգն է. անունն յառաջ է եկել յունարէն փսալլօ=երգել բայից, նորա պաշտօնն է եկեղեցում կանգնել և երգել սաղմոս, ալէլու և մեսեդի.

Ը. Անագնոս=դրակարդաց, ընթերցող. յառաջ է եկել յունարէն անագնօ=կարդալ բայից. պաշտօնն է Ս. Գրքից միայն մարգարէների ընթերցուածները կարդալ եկեղեցում, նըմանապէս և տօների համար սահմանուած ճառերն ու պատմութիւնները (զբնագիրս և զվարդապետաքանչս.) այս ընթերցուածներն յունարէն ասում են անագն. սոյն մտքով և գործ է դրել Օրպէլեանն՝ իւր ողջ-

բի խօսքերն „՞ոչ ընթերցողք անոփանին“. այս բառը պէտք չէ շփոթել Հայերէն անոփան=ուշ, յետի բառի հետ։

Է. Երոյդիանոն *)=ԷՅՈՍՈՍԻԿՈՍ=պղէր. նորա պաշտօնն է Ս. Գրքից միայն Ս. Առաքեալների ընթերցուածները կարդալ, մոմեղէն կրել և այլն։

Զ. Դիակոն=ՍՊՍՍՈՒ=ՍՐԿՈՍ. պաշտօնն է Ս. Գրքից միայն Ս. Աւետարանը կարդալ, քարոզել, խունկ արկանել և այլն։ Ասում է-րևում է, որ Ս. Գրքի ընթերցանութեան գործը բաժանուած էր երեք դասերի մէջ։ Ինչպէս յայտնի է Ս. Աւետարանի, առաքելական թղթերի և մարգարէութիւնների ընթերցուածքը տարբեր առոգանութիւն և ձայն ունի։ Այս հանգամանքն ևս Դիակո-

(*) Ն. Լամբրօնացու „Հօթնեերորդ դաս իւրոյ եկեղեցւոյ դիակոնք“ խօսքերը պէտք է ուղղել „Հօթնեերորդ դա եկեղեցւոյ ի-րոյ պիակոն+=Երոյդիանոն+“։

նի, երոյդիակոնի և անագանոսի մէջ դնում է մի արտաքին տարբերութիւն։

Ե. Երէց և տանուտէր. պաշտօնն է պատարագ անել, մկրտել և անագանոս ու փսաղտ կարգել. քահանայի հովուութեան տեղը քաղաքն է, իսկ գիւղի հովիւը կոչւում է երէց. «տանուտէր ի տաղտս, երէցոն ի գիւղս» ասում է Լամբրօնացին։ Այսպէս էին զանազանում և Ե. դարում։

Դ. Եպիսկոպոս=Դէպ, այցելու, պեռուչ. պաշտօնն է քահանայ և սարկաւագ ձեռնադրել, եկեղեցի օրհնել և սեղան ու աւազան օծել. նա մեռոնն իւր մետրապոլտից պէտք է ստանայ, իսկ սա իւր արքեպիսկոպոսից։ Եպիսկոպոսի հովուութեան տեղն է քաղաքը. իսկ գաւառի (կամ գիւղերի) եպիսկոպոսը կոչւում է տրէպիսկոպոս=գաւառական պեռուչ, գիւղական եպիսկոպոս։

Գ. Մետրապոլիտ=մայրաքաղաքացի կամ մայրաքաղաքի եպիսկոպոս. պաշտօնն է եպիսկոպոս ձեռնա-

դրել և ձեթ օրհնել. երեք մետրապոլիտ կարող են ձեռնադրել արքեպիսկոպոս։

Բ. Արքեպիսկոպոս=Դիոպտեպ, Եպիսկոպոսապետ. պաշտօնն է ձեռնադրել մետրապոլիտ և օրհնել մեռոնը. երեք արքեպիսկոպոս կարող են ձեռնադրել պատրիարք։ Լամբրօնացին և Օրպէլեանը թարգմանում են այդ անունը եպիսկոպոսապետ բառով և բացատրում են, որ արքեպիսկոպոսների մէջ մեծը՝ վարելով ընդհանրական իշխանութիւն միւսների վերայ՝ կոչւում է Եպիսկոպոսապետ կամ ընդհանրական, որ յունարէն ասւում է կաթուղիկոս։ Լամբրօնացին ասում է թէ «կաթուղիկոսն այն առաւելութիւնն ունի արքեպիսկոպոսից, որ ոչ միայն իւր վիճակում, այլ ամեն տեղ, ուր որ իւր աղգը գտնւում է, իրաւունք ունի եպիսկոպոս ձեռնադրելու և մեռոն օրհնելու։

Լ Ա. Պատրիարք=Հայրապետ. պաշտօնն է արքեպիսկոպոս ձեռնադրել և հրաման տալ «աշխարհագումար ժողովոց»։

Միայն այս նուիրապետական անուանները չեն, որ փոխ են առնուած Յունաց եկեղեցուց. կան և ուրիշ շատ բառեր՝ մեզ համար այժմ սովորական եղած, բայց իրենց ծագումովն յունարէն. զորօրինակ՝ եկեղեցի=էկկլէզիա. կղերիկոս=կլէրիկոս=լեռնական, խառնաբարոյ. որմն- կամ օրմն (օրթիս=կանգնել, շինակել)=նոնգոնած, շինուած. պարսպաձեռ (պրոսխայնս=նայել, մտիկ տալ)=մտիկ տուէ՛ք, նայեցարո՛ւ. ալէլուիա=յաղթութի՛ւն, ցնծութի՛ւն մեղեդի=մելոդի՛ա=երգեր. մեսեդի=մեսոդի՛=՞էջ, մէջ դէղը=սեղանի առաջ բարձրաձայն ասուած փառաբանութիւնը կամ աղօթքը. սաղմոս=փսալմոս=ներբող, երգ. կիրակի=գիրուանական: Կաթողիկէ=կաթոլիկէ (կաթոլոս=համայն)=ընդհանրական. իսկ արդի լեզուով կաթուղիկէ ասում են եկեղեցու վեղարաձև գմբէթին: Այս բառերի մեծ մասը արդէն լիովին մտած են դեռ հին դարերից և գրէթէ ոչ մի հայերէն բառով փոխարինուած չեն:

39. Ն. նխ. տպ. ակոռ. յակոնդ=յակինթ=եաղուտ քար, սարդիոն=սէյլան ակ:

40. պահանջած թեւի, իսկ ապրանքած ոտի պարդեր են. սովորաբար ասւում է բիլազուկ, էպրէնճան.

41. Ն. նխ. տպ. Երեմ՝ նեղկեսացին։ Ս. Գրքի մէջ այսպէս է.—„պատգամն Աստուծոյ, որ եղև ի վերայ Երեմիայի քեղկեայ. (Եր. Ա. 1). ասոր հետևումէ, որ ուղիղ չէ Եղկեսացի կամ Նեղկեսացի համարել Երեմիային. մեզ այնպէս է թւում, որ հեղինակը կամեցել է Երեմիայի մակդիրն եղկեսայ բառով յայտնել, որ նշանակումէ՝ եղ—սոսղ սղբ սոսղ լոյսղ։

42. Ա. ձեռ. Ա-նչ+.

43. Ն. նխ. տպ. „վայբ+ +անչ+ +եղ հանդիպին“.

44. Ն. տպ. պրեկ.

45. Պրոտոֆրոնտէս, յունարէն նշանակումէ նախահոգակ, նախապատիւ, կամ ինչպէս Օրպէլեանն է մեկնում „նախաթոռ և գլուխ ամենայն եպիսկոպոսաց»։

46. Հոէպ=հոէպոբ, յունարէն նշանակում է ճարպաման, ճառախօս։

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Էր. 9 տող 7 վերևից կոչէ՝ կարդա՝ կոչէ.
Էր. 15 տող 9 ներքևից Եգիպտոս — Եգիպտոս.
Էր. 20 տող 5 ներք. Օրպէլեանին — Օրպէլեանին.
Էր. 64 տող 3 ներք զվարդապետականը — զվարդապետականս.